համար — «դէպի տուն» ճողոպրի կրկին: Մոսկուայի կարմիր ցարե՞րը պիտի նրա առաջը բռնեն: Չէ՞ որ 1918 թ. օրինակը կայ մեր առջեւ: Եւ ի՞նչ, նրանց համար դժուա՞ր է Կովկասը եւ Հայաստանը վերստին լքելու համար «պատճառներ» բերել, մինչեւ իսկ համայնավարօրէն հիմնաւորե՞լ նման զաւագիր քաղաքականութիւն. ի հարկին՝ մշտապատրաստ «ազգերի կատարեալ ինքնորոշումն, մինչեւ անջատո՞ւմն իսկ» նշանաբանը հանդէս բերելով, նորոգուած վարիսեցիութեամբ:

Հայ ազգային քաղաքականութիւնը պարտաւո՞ր է հաշուի առնել այս ամէնը, թէ՞ ոչ: Հայաստանի ճակատագրով զբաղուող բոլո՞ր խմբագիրներին, թէկուզ, ծանօթ է այն փաստը, որ Տաճկաստանի կողմից այսօրուան Հայաստանը չունի եւ ոչ մի բնական սահման. որ՝ մի փոքրիկ ռազմական անյաջողութեան պարագային իսկ՝ մէկ հատիկ հարուածով տաճկական բանակները տէր ու տիրական դառնալ կարող են Շիրակին ու Այրարատեան դաշտին: Հայ ժողովուրդը թէկուզ վերջին պատերազմի ընթացքին մէկից աւելի անգամներ իր աչքով տեսաւ ու իր մորթու վրայ ըզգաց, թէ ո՞րպիսի հեշտութեամբ ռուսները «ռազմագիտական նկատումներով» նահանջի ճամբան բռնել գիտեն ու մէկ հատիկ հրամանի վրայ՝ տառնեակ ու հարիւր հազարաւոր հայերի ձեռքը դաղթականի ցուպը տալ սորված են: Ի՞նչ պիտի շահի հայութիւնը՝ անգամ ռուս զէնքի յաջողութեան դէպքում: Ի՞նչ է, Սուրմալուն եւ Կարսը ռուսը հայերո՞վ պիտի բնակեցնէ, պիտի մեծացնէ՞ Հայաստանը: Կարինն ու Վանը դրաւելով, ասենք, նա մեր թրքահայ բազմութիւնները՞ պիտի այնտեղ առաջնորդէ ու հայկական մարած օջախնե՞ր նորէն վառել տայ: Ի՞նչ մանկամտութիւն: Անցեալից խրատ չառնե՞նք: 1828–1829 թ. նման ծրագիրները ռուսը վաղո՞ւց է թողել, 1878–ից սկսած արդէն: «Եփրատեան կազակութեան» ծրագիրը մոռացե՞լ ենք միթէ: Երազներով տարուել պէտք չէ՛: Լաւագոյն պարագային՝ մաղի միջով հատուկէնա հայ գաղթականներ ներս պիտի թողնուին հայրենիքից ներս: Չէ՞ որ վերջին 8 տարուան ընթացքում հազիւ 20 հազար հայեր են առնուել Խորհրդային սահմաններից ներս: Թրքացած Կարսն ու Սուրմալուն, Կարինն ու Վանը ռուսը հեշտութեամբ մեր ժողովուրդին վերադարձնելու չէ՛, չհաւատանք դրան, ոչ էլ իրական Հայաստանը մեծացնելու առաջադրութեամբ՝ նա այդ երկրամասերի թուրք ու քիւրդ ազգաբնակութիւնը Անատոլուի խորքերը պիտի քշէ: Կարող է առարկուել, թէ այդպէս վարուել են հին ռուսները միայն, թէ՝ «Եփրատեան կազակութիւնը» ցարական ծրագիր է եղած, իսկ, իսկ... բոլշեւիկները ուրի՞շ բան են:

Ինչպէ՞ս չէ: Մեր աչքով ենք տեսնում ամէն օր թէ այդ ռուսն էլ ինչպէս է «Դուրգուրում» է՛ն հաւատարիմ հային... Նախիջեւանը թուրքին թողնելով, աւելին՝ մինչեւ իսկ դուտ հայաբնակ Ղարաբաղը եւ Ջաւախքն մեր հարեւաններին նուէր բերելով: Տարբե՞ր պիտի լինի, միթէ, ռուս քաղաքականութեան գիծը, ապագային: Ի՞նչ երաշխիք ունինք սրան: Եւ այս, կրկնում ենք, լաւագո՛յն պարագային, Ռուսաստանի յաջողութեան դէպքում: Սարսուռ միայն զգալ կարող ենք ուրեմն՝ նրա անյաջողութիւնը աչքի առաջ բերելով: Ուստի եւ, հայ ժողովուրդի եւ Հայաստանի ամենակենսական շահը պահանջում է, որ երբ եւէ, ինչեւէ նպատակով ու առաջադրութեամբ էլ լինի — թէկուզ Հայաստանի ամբողջական վերանկանգնումի նշանաբանի տակ, օտարի ձեռքով — ընդհարում տեղի չունենայ ռուս-տաճկական սահմանի վրայ, որ մեր հայրենիքը նորէն թատերաբեմ չդառնայ պատերազմական գործողութեանց:

Եւ սակայն, աշխարհակալ պետութիւնները ո՛չ պատերազմի փողը հնչեցնելիս են հպատակ ժողովուրդների կամքն ու ցանկութիւնը հարցնում ոչ էլ՝ «հաշտութեան ձիթենին» իրար մեկնելիս: Մի բան, որ այդ ժողովուրդները կարող են եւ պարտաւոր են անել սակայն, այդ այն է որ՝ նրանք սեփական շահերը նկատի ունենան եւ ո՛չ թէ ամուր կառչած մընան մէկ կամ միւս աշխարհակալի փէշից, լինի նա մինչեւ իսկ ամենաղօրաւորը:

Օտարից փրկութիւն չկա՛յ, ըմբռնենք վերջապէս: Ո՛չ թէ այս կամ այն օտար օրիենտացիա, այլ՝ սեփական օրիենտացիա: Ինչ որ